Երկրորդ ընթերցում

Նախագիծ

Պ-569-25.07.2014,05.09.2014-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի 283-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 283. Գործի վերաբերյալ որոշման հայտարարումը և որոշման պատճենի հանձնումը

Որոշումը հայտարարվում է անհապաղ, գործի քննությունն ավարտելուն պես:

Որոշման պատճենը երեք օրվա ընթացքում հանձնվում է այն անձին, որի վերաբերյալ այն ընդունվել է, ինչպես նաև տուժողին՝ նրա խնդրանքով: Դա կարող է իրականացվել պատվիրված փոստով, այդ թվում՝ ստանալու մասին ծանուցմամբ, հասցեատիրոջը ստորագրությամբ առձեռն հանձնելու, հասցեատիրոջ գրավոր դիմումի հիման վրա ֆաքսով, էլեկտրոնային փոստով կամ հեռահաղորդակցության միջոցով (այդ թվում՝ բջջային հեռախոսահամարին կարճ հաղորդագրություն) ուղարկելու միջոցով:

Որոշումը պետք է հանձնվի անձամբ հասցեատիրոջը: Որոշումը համարվում է անձամբ հանձնված, եթե դրա ստացման մասին անդորրագիրը ստորագրված է անձամբ հասցեատիրոջ կողմից կամ հասցեատերը որոշումը ստանալու անդորրագրի վրա ստորագրել է որոշումը ստանալուց հրաժարվելու մասին: Որոշումը համարվում է անձամբ հանձնված նաև այն դեպքում, երբ հասցեատիրոջ գրավոր դիմումի հիման վրա այն ուղարկվել է ֆաքսով, էլեկտրոնային փոստով կամ հեռահաղորդակցության միջոցով (այդ թվում՝ բջջային հեռախոսահամարին կարճ հաղորդագրություն ուղարկելու միջոցով),

և դրանք հավաստում են պարտավոր անձի կողմից վարչական ակտի մասին ծանուցված լինելու փաստը: Որոշումը էլեկտրոնային փոստով ուղարկելու դեպքում ծանուցումը իրականացվում է «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Եթե անձի (որին ուղարկվել է որոշումը) հայտնած հասցեով ուղարկված որոշումը վերադարձվել է կամ ծանուցման փաստը չի հաստատվել կամ հասցեատերը հրաժարվել է ստանալ պատշաճ կարգով ուղարկված (հանձնվող) որոշումը եւ ստորագրել հրաժարվելու մասին, ապա որոշումը ուղարկվում է այդ անձի հաշվառման հասցեով և տեղադրվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Այն դեպքերում, երբ որոշումը ուղարկվում է անձի հաշվառման հասցեով և տեղադրվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, անձը համարվում է պատշաճ ծանուցված որոշումը ինտերնետային կայքում տեղադրելու օրվան հաջորդող երրորդ օրը:

Մաքսային կանոնների խախտման վերաբերյալ և մաքսանենգության վերաբերյալ գործերի որոշման պատճենը հանձնվում է այն անձին, որի վերաբերյալ այն կայացվել է Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքով սահմանված կարգով:

Սույն օրենսգրքի 173-րդ հոդվածով և 191-ին հոդվածի առաջին և երկրորդ մասերով նախատեսված վարչական իրավախախտումների գործերով, այն անձի նկատմամբ որոշման պատճենը, որին ձեռնարկության, հիմնարկի, կազմակերպության կողմից հրազենը, ինչպես նաև զինամթերքը վստահվել է պաշտոնեական պարտականությունները կատարելու կապակցությամբ կամ այդպիսիք տրվել են ժամանակավոր օգտագործման նպատակով, ուղարկվում է համապատասխան ձեռնարկությանը, հիմնարկին կամ կազմակերպությանը՝ ի գիտություն, և ոստիկանությանը՝ այդ անձին հրազենից օգտվելն արգելելու մասին հարցը քննելու համար:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

Առաջարկության հեղինակը	**Հոդված, մաս, կետ**	**Առաջարկությունը**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի եզրակացությունը կամ հիմնավորումը**
Հայկ Բաբուխանյան	Հոդված 1	Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի 283-րդ հոդվածի 6-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Սույն օրենսգրքի 224-ր հոդվածի երկրորդ մասի 2-րդ կետում նշված հոդվածներով նախատեսված իրավախախտումների վերաբերյալ գործերով ընդունված որոշումները պետք է հանձնվեն անձամբ հասցեատիրոջը: Որոշումը համարվում է անձամբ հանձնված, եթե դրա ստացման մասին անդորրագիրը ստորագրված է անձամբ հասցեատիրոջ կողմից, կամ հացեատերը որոշումը ստանալու անդորրագրի վրա ստորագրել է որոշումը ստանալուց հրաժարվելու մասին: Եթե անձը, որին պատշաճ կարգով ուղարկվել է որոշումը հրաժարվել է ստանալ ուղարկված(հանձնվող) որոշումը և ստորագրել հրաժարվելու մասին, ապա վարչական պատասխանատվության հարցը լուծվում է դատական կարգով»	Առաջարկը ընդունվել է մասնակիորեն:

Հեղինակ		Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի 283-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ. **«Հոդված 283. Գործի վերաբերյալ որոշման հայտարարումը և որոշման պատճենի հանձնումը** Որոշումը հայտարարվում է անհապաղ, գործի քննությունն ավարտելուն պես: Որոշման պատճենը երեք օրվա ընթացքում հանձնվում է այն անձին, որի վերաբերյալ այն ընդունվել է, ինչպես նաև տուժողին՝ նրա խնդրանքով: Դա կարող է իրականացվել պատվիրված փոստով, այդ թվում՝ ստանալու մասին ծանուցմամբ, հասցեատիրոջը ստորագրությամբ առձեռն հանձնելու, հասցեատիրոջ գրավոր դիմումի հիման վրա ֆաքսով, էլեկտրոնային փոստով կամ հեռահաղորդակցության միջոցով (այդ թվում՝ բջջային հեռախոսահամարին կարճ հաղորդագրություն) ուղարկելու միջոցով: Որոշումը պետք է հանձնվի անձամբ հասցեատիրոջը: Որոշումը համարվում է անձամբ հանձնված, եթե դրա ստացման մասին անդորրագիրը ստորագրված է անձամբ հասցեատիրոջ կողմից կամ հասցեատերը որոշումը ստանալու անդորրագրի վրա	Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի փոփոխվող 283-րդ նոր խմբագրությամբ շարադրելը նպատակ է հետապնդում նախագծով առաջարկվող գործի վերաբերյալ որոշման պատճենի հանձման կարգը կիրառել ոչ միայն օրենսգրքի 224-րդ հոդվածի երկրորդ մասի 2-րդ կետում նշված հոդվածներով նախատեսված իրավախախտումների վերաբերյալ գործերի դեպքերում, այլ բոլոր իրավախախտումների վերաբերյալ գործերով, ինչը կապահովի քաղաքացիների պատշաճ ծանուցումը բոլոր գործերով: Բացի վերոգրյալից սահմանվում ծանուցված լինելու ժամկետը այն դեպքերում, երբ որոշումը ուղարկվում է անձի հաշվառման հասցեով և տեղադրվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում, այն է՝ որոշումը ինտերնետային կայքում տեղադրելու օրվան հաջորդող օրը, ինչը քաղաքացիների համար ստեղծում է պատշաճ երաշխիքներ ծանոթանալ իրենց վերաբերյալ կայացված որոշումների բովանդակությանը:

		ստորագրել է որոշումը ստանալուց հրաժարվելու մասին։ Որոշումը համարվում է անձամբ հանձնված նաև այն դեպքում, երբ հասցեատիրոջ գրավոր դիմումի հիման վրա այն ուղարկվել է ֆաքսով, էլեկտրոնային փոստով կամ հեռահաղորդակցության միջոցով (այդ թվում՝ բջջային հեռախոսահամարին կարճ հաղորդագրություն ուղարկելու միջոցով), և դրանք հավաստում են պարտավոր անձի կողմից վարչական ակտի մասին ծանուցված լինելու փաստը։ Որոշումը էլեկտրոնային փոստով ուղարկելու դեպքում ծանուցումը իրականացվում է «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով։ Եթե անձի (որին ուղարկվել է որոշումը) հայտնած հասցեով ուղարկված որոշումը վերադարձվել է կամ ծանուցման փաստը չի հաստատվել կամ հասցեատերը հրաժարվել է ստանալ պատշաճ կարգով ուղարկված (հանձնվող) որոշումը եւ ստորագրել հրաժարվելու մասին, ապա որոշումը ուղարկվում է այդ անձի հաշվառման հասցեով և տեղադրվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում։ Այն դեպքերում, երբ որոշումը ուղարկվում է անձի հաշվառման հասցեով և տեղադրվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների	

		պաշտոնական ինտերնետային կայքում, անձը համարվում է պատշաճ ծանուցված որոշումը ինտերնետային կայքում տեղադրելու օրվան հաջորդող երրորդ օրը: Մաքսային կանոնների խախտման վերաբերյալ և մաքսանենգության վերաբերյալ գործերի որոշման պատճենը հանձնվում է այն անձին, որի վերաբերյալ այն կայացվել է Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքով սահմանված կարգով: Սույն օրենսգրքի 173-րդ հոդվածով և 191-ին հոդվածի առաջին և երկրորդ մասերով նախատեսված վարչական իրավախախտումների գործերով, այն անձի նկատմամբ որոշման պատճենը, որին ձեռնարկության, հիմնարկի, կազմակերպության կողմից հրազենը, ինչպես նաև զինամթերքը վստահվել է պաշտոնեական պարտականությունները կատարելու կապակցությամբ կամ այդպիսիք տրվել են ժամանակավոր օգտագործման նպատակով, ուղարկվում է համապատասխան ձեռնարկությանը, հիմնարկին կամ կազմակերպությանը՝ ի գիտություն, և ոստիկանությանը՝ այդ անձին հրազենից օգտվելն արգելելու մասին հարցը քննելու համար:»	